***Ծնվել է 1977թ. հոկտեմբերի 29-ին, Երևանում:***

***Կրթությունը***

***1994-1999թթ.*** *- ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ, պատմաբանի և միջազգային հարաբերությունների մասնագետի որակավորում*

***1999-2002թթ.*** *- ԵՊՀ Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի ասպիրանտուրա, պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Ատենախոսության թեման՝ «Ղարաբաղյան խնդիրը և միջազգային դիվանագիտությունը 1991-1994թթ.»:*

***2000-2002թթ.*** *- ՌԴ ԱԳՆ Դիվանագիտական ակադեմիայի Միջազգային հարաբերություններ ֆակուլտետ:*

***ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ***

***1997-2000 թթ.*** *- Հայաստանում ԼՂՀ մշտական ներկայացուցչություն, մշտական ներկայացուցչի օգնական*

***2000-2002թթ.*** *- ՌԴ-ում ՀՀ դեսպանություն, Քաղաքական բաժնի ղեկավարի օգնական*

***2002-2003թթ.*** *- ՀՀ ԱԳՆ Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչություն, կցորդ*

***2002-2004 թթ.*** *- դասավանդել է Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանում:*

***2003-2004 թթ.*** *- ՀՀ ԱԳՆ Սպառազինությունների վերահսկման և միջազգային անվտանգության վարչության ՆԱՏՕ-ի բաժին, կցորդ*

***2004-2007 թթ.*** *- Բելգիայի Թագավորությունում, Նիդերլանդների Թագավորությունում և Լյուքսեմբուրգի Մեծ Դքսությունում ՀՀ դեսպանություն, երրորդ, ապա երկրորդ քարտուղար*

***2007-2008 թթ.*** *- ՀՀ ԱԳՆ Մամուլի և տեղեկատվության վարչության Լրատվամիջոցների հետ կապի բաժնի վարիչի պաշտոնակատար*

***2007-2018 թթ.*** *- դասավանդել է ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետում, 2013թ. շնորհվել է դոցենտի գիտական կոչում:*

***2008-2010 թթ.*** *- ՀՀ ԱԳՆ Մամուլի և տեղեկատվության վարչության պետի, ինչպես նաև մամուլի քարտուղարի պարտականությունները կատարող*

***2010-2018 թթ.*** *- ՀՀ ԱԳՆ մամուլի խոսնակ*

***2016-2018 թթ.*** *- ՀՀ ԱԳՆ Լրատվության և հանրային դիվանագիտության վարչության պետի պաշտոնակատար*

***2018-2023թթ.*** *- Նիդերլանդների Թագավորությունում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան, Քիմիական զենքի արգելման կազմակերպությունում ՀՀ մշտական ներկայացուցիչ:*
***2020-2023թթ.*** *- Լյուքսեմբուրգի Մեծ Դքսությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան (նստավայրը՝ Հաագա):*
*Հեղինակել է մեկ տասնյակից ավելի գիտական հոդվածների, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի խնդիրը և միջազգային դիվանագիտությունը, 1991-1994 թթ. մենագրության, «Բազմակողմ Դիվանագիտություն» և «Արտաքին քաղաքական տեղեկատվական ապահովումը» դասախոսությունների ժողովածուներ:*

*2023 թվականի սեպտեմբերի 4-ի ՀՀ նախագահի հրամանագրով նշանակվել է Բելգիայի Թագավորությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան (նստավայրը՝ Բրյուսել):*